ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
<<ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ>>
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՊԻՏԱԿԻ 1988թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 23-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

<<ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ>>

2-3 դեկտեմբերի 2011թ.

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը 2011թ. դեկտեմբերի 2-ին և 3-ին կազմակերպում է Երևանում (0054, Երևան, Դավիթաշեն 4-րդ զանգված, Ա.Միկոյան 109/8, ՀՀ ԱԻՆ) գիտաժողով՝ նվիրված Սպիտակի 1988թ. աղետալի երկրաշարժի 23-րդ տարելիցին:

Գիտաժողովի թեմատիկ ծրագիրը

1-ին սեկցիա. ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի գնահատում

- ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատում և ուժեղ երկրաշարժերի կանխատեսում
- սեյսմիկ վտանգի տարբեր մակարդակների քարտեզագրում
- սեյսմիկ վտանգի գնահատման մեթոդական խնդիրներ

2-րդ սեկցիա. ՀՀ տարածքի և բնակավայրերի սեյսմիկ ռիսկի գնահատում

- բազմաբնակարան տիպային շենքերի, հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատում
- բնակավայրերի տարածքների սեյսմիկ ռիսկի և դրա տարբեր բաղադրիչների գնահատում
- կենսաապահովման գծերի սեյսմիկ ռիսկի գնահատում
- սեյսմիկ խոցելիության և ռիսկի գնահատման մեթոդական հարցեր

3-րդ սեկցիա. ՀՀ տարածքի սեյսմիկ ռիսկի նվազեցում

- շենքերի և կառույցների սեյսմիկ վտանգի նոր մակարդակին համապատասխան ուժեղացման և սեյսմազինվածության բարձրացման մեթոդներ
- տարածքների սեյսմիկ խոցելիության և սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված նորմատիվ փաստաթղթեր
- փրկարարական ուժերի նախապատրաստում
- սեյսմապաշտպանական վարքականոնների ուսուցում երկրաշարժից առաջ, երկրաշարժի ժամանակ և հետո
- պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների նախապատրաստման մեթոդներ
- երկրաշարժերի երկրորդային հետևանքների նվազեցման մեթոդներ
- բնակչության տարբեր շերտերի իրազեկվածության բարձրացում

Գիտաժողովի քարտուղարությունը

Վալերի Խոնդկարյան – երկր.-հանք. գիտ. թեկնածու, e-mail: khondkaryan@yahoo.com
Սոս Մարգարյան - երկրաբան. գիտ. թեկնածու, e-mail: msos78@hotmail.com
Վարսիկ Հայրապետյան, e-mail: h_varsenik@yahoo.com
Հեռախոս՝ + 374 60 440275
Ֆաքս՝ + 374 10 363449

Գիտաժողովի ծրագիրը

Մասնակիցների գրանցումը սկսվելու է դեկտեմբերի 2-ին ժամը 9^{30}-ին ՀՀ ԱԻՆ նիստերի մեծ դահլիճում:
Գիտաժողովի բացումը կկայանա դեկտեմբերի 2-ին ժամը 10^{00}-ին ՀՀ ԱԻՆ նիստերի մեծ դահլիճում: Պլենար նիստը՝ նույն օրը ժամը 11^{00}-ին ՀՀ ԱԻՆ նիստերի մեծ դահլիճում:
Սեկցիոն զեկուցումները տեղի կունենան.
1-ին և 2-րդ սեկցիաներ՝ դեկտեմբերի 2-ին ժամը 12^{00}-ից և 3-ին ժամը 10^{00}-ից ՀՀ ԱԻՆ նիստերի մեծ դահլիճում,
3-րդ սեկցիա՝ դեկտեմբերի 2-ին ժամը 12^{00}-ից և 3-ին ժամը 10^{00}-ից ՀՀ ԱԻՆ ակտերի դահլիճում:
Գիտաժողովի փակումը կկայանա դեկտեմբերի 3-ին ժամը 18^{00}-ին ՀՀ ԱԻՆ նիստերի մեծ դահլիճում:

Մասնակցությունը

Մասնակցության հայտում նշել հետևյալ տվյալները.
- ազգանուն, անուն, հայրանուն,
- կազմակերպությունը, պաշտոնը, գիտական աստիճանը և կոչումը,
- զեկուցման թեման,
- հասցեն, հեռախոսները, էլ.փոստի հասցեն:

Մասնակցության հայտերը պետք է ներկայացվեն **մինչև 2011թ. սեպտեմբերի 25-ը** ստորև նշված հասցեներով:

Մասնակցության հայտերի և զեկուցումների թեզիսների ներկայացումը

Մասնակցության հայտերը և զեկուցումների թեզիսները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով h_varsenik@yahoo.com կամ khondkaryan@yahoo.com հասցեներով կամ ուղարկվում են էլեկտրոնային կրիչով գիտաժողովի քարտուղարություն հետևյալ հասցեով՝ 0054, Երևան, Դավիթաշեն 4-րդ զանգված, Ա.Միկոյան 109/8, ՀՀ ԱԻՆ, 'ՍՊԱԾ' գործակալություն:

Թեզիսների լեզուն՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներից մեկով, ծավալը՝ մինչև 1 էջ: Տառատեսակը. հայերենը՝ GHEA Grapalat, ռուսերենն ու անգլերենը՝ Times New Roman: Տառաչափը՝ 11, միջտողային միջանցքները՝ 1,2 ինտերվալով, բոլոր լուսանցքները՝ 20 մմ, էջի ֆորմատը՝ A5:
Զեկուցումների թեզիսները հրատարակվելու են:

<u>Թեզիսների ներկայացման օրինակ.</u>
ՎԵՐՆԱԳԻՐ՝ 12 տառաչափով, մեծատառերով, տողի մեջտեղում,
Հեղինակի (հեղինակների) անունը և ազգանունը՝ 12 տառաչափով, տողի մեջտեղում,
Կազմակերպությունը՝ 12 տառաչափով, շեղատառերով, տողի մեջտեղում:

Թեզիսների ներկայացման վերջնաժամկետն է **25 սեպտեմբերի 2011թ.**:
Գիտաժողովին վերաբերող լրացուցիչ տեղեկատվությունը կտեղադրվի ՀՀ ԱԻՆ-ի կայքում. www.mes.am:

Գիտաժողովի կազմկոմիտե